Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ԳՆՈՒՄՆԵՐԻ ԳՈՐԾԸՆԹԱՑԻՆ ՄԱՍՆԱԿՑԵԼՈՒ ԻՐԱՎՈՒՆՔ ՉՈՒՆԵՑՈՂ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԻ ՑՈՒՑԱԿՈՒՄ ՆԵՐԱՌԵԼՈՒ ՄԱՍԻՆ

19 դեկտեմբերի 2024 թվական ք. Մեծամոր

«ՀԱԷԿ» ՓԲԸ գլխավոր տնօրեն Է. Մարտիրոսյանս ծանոթանալով «ՀԱԷԿ-ԷԱՃԱՊՁԲ-184/24» ծածկագրով հրապարակված գնման ընթացակարգին

Պ Ա Ր Զ Ե Ց Ի

«ՀԱԷԿ» ՓԲԸ կարիքների համար լուսավորման սարքերի և լամպերի ձեռքբերման նպատակով 2024 թվականի նոյեմբերի 5-ին հրապարակվել է «ՀԱԷԿ-ԷԱՃԱՊՁԲ-184/24» ծածկագրով գնման ընթացակարգ (այսուհետ՝ ընթացակարգ): Ընթացակարգին, ի թիվս այլ մասնակիցների, մասնակցության հայտ է ներկայացրել նաև «Գարանտ 24» ՍՊ ընկերությունը, վերջինս համարվել է նվազագույն գնային առաջարկ ներկայացրած մասնակից 4-րդ չափաբաժնի մասով:

Հայտերի գնահատման փուլում, «Գարանտ 24» ՍՊԸ մասնակցության հայտի ուսումնասիրության արդյունքում, գնահատող հանձնաժողովի կողմից արձանագրվել է հետևյալը՝ «մասնակցի կողմից ներկայացրած դիմում-հայտարարության ձևաչափը (հավելված 1) չի համապատասխանել ընթացակարգի հրավերի օրինակելի ձևին: Մասնավորապես, մասնակցի մոտ բացակայել է հետևյալը՝ «Սույնով (մասնակցի անվանում) հայտարարում և հավաստում է, որ՝ 1) (մասնակցի անվանում)-ն և իրեն փոխկապակցված անձինք....»: Հավելված 1-ը վավերացված չի եղել էլեկտրոնային-թվային ստորագրությամբ: Մասնակիցը չի ներկայացրել հավելված 1.3 (իրական շահառուների վերաբերյալ հայտարարագրի ձև) և տեխնիկական բնութագիր»:

Գնահատող հանձնաժողովը ՀՀ Կառավարության 04.05.2017 թվականի թիվ 526-Ն որոշման 41-րդ կետի համաձայն կասեցրել է նիստը և «Գարանտ 24» ՍՊԸ-ին առաջարկել է մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել արձանագրված անհամապատասխանությունները՝ ներկայացնել հրավերով սահմանված ձևաչափին համապատասխան հավելված 1՝ վավերացված էլեկտրոնային-թվային ստորագրությամբ, հավելված 1.3 (իրական շահառուների վերաբերյալ հայտարարագրի ձև)՝ վավերացված էլեկտրոնային-թվային ստորագրությամբ և հրավերի պահանջներին բավարարող տեխնիկական բնութագիր:

«Գարանտ 24» ՍՊԸ-ն այդպես էլ չի շտկել արձանագրված անհամապատասխանությունները:

Ղեկավարվելով ՀՀ Կառավարության 04.05.2017 թվականի թիվ 526-Ն որոշման Հավելված 1-ի 42-րդ կետով գնահատող հանձնաժողովը 2024 թվականի դեկտեմբերի 12-ի

թիվ 4.1 արձանագրությամբ կայացված որոշմամբ «Գարանտ 24» ՍՊԸ-ի մասնակցության հայտը գնահատել է անբավարար և մերժել է այն:

Հաշվի առնելով վերոգրյալը և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերի

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

1. «Գարանտ 24» ՍՊ ընկերությանը ներառել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում երկու տարի ժամկետով:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ՀՀ Ֆինանսների նախարարությանը և մասնակցին տրամադրելու օրվանից:
3. Որոշումը կայացնելու հաջորդող օրն այն տրամադրել ՀՀ ֆինանսների նախարարությանը և «Գարանտ 24» ՍՊԸ-ին:

Գլխավոր տնօրեն **Է. Մարտիրոսյան**